ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N3249 - Ա **23 ապրիլի 2009թ.**

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՓՈՂՈՑԻ 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔԻ Հ. 4 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏԱՇ ԱՎԵՏԻ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԻ, ՀՌԻՓՍԻՄԵ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ, ԱՐՏԱՇԵՍ ՌԱՖԻԿԻ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԻ, ԷԼԵՈՆՈՐԱ ՌԱՖԻԿԻ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԻ, ԼՈՒՏԵՐ ԳԵՎՈՐԳԻ ՋԵՐԵՋՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Արտաշ Ավետի Արզումանյանի (ծնված 03.04.1931թ.), Հռիփսիմե Հովհաննեսի Մարտիրոսյանի (ծնված 10.11.1965թ.) Արտաշես Ռաֆիկի Արզումանյանի (ծնված 07.07.1988թ.), Էլեոնորա Ռաֆիկի Արզումանյանի (ծնված 16.09.1986թ.), Լուտեր Գևորգի Ջերեջյանի (ծնված 01.07.1932թ.) դիմումը: Տեղազրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Արարատյան փողոցի 2-րդ նրբանցքի հ.4 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 730.03քմ, որից 646քմ մակերեսով հողամասը Արտաշ Ավետի Արզումանյանին, Հռիփսիմե Հովհաննեսի Մարտիրոսյանին, Արտաշես Ռաֆիկի Արզումանյանին, Էլեոնորա Ռաֆիկի Արզումանյանին, Լուտեր Գևորգի Ջերեջյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է: Օրինական հողամասին կից օգտագործվող 84.03քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 1956 թվականը, 17.02.2009թ. ժառանգության իրավունքի վկայագիրը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունի տարածքային ստորաբաժանման 12.02.2009թ. հ.1028, Երևանի քաղաքապետարանի <<Հողի և ունեցվածքի գործառնություններ>> ՊՓԲԸ-ի 16.04.2009թ. հ.20/2-Ե/242 գրությունները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 10.04.2009թ. հ.20-Ել-3187 եզրակացությունը, համաձայն որի Արարատյան փողոցի 2-րդ նրբանցքի հ.4 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով <<Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Արարատյան փողոցի 2-րդ նրբանցքի հ.4 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Արտաշ Ավետի Արզումանյանի, Հռիփսիմե Հովհաննեսի

Մարտիրոսյանի, Արտաշես Ռաֆիկի Արզումանյանի, Էլեոնորա Ռաֆիկի Արզումանյանի, Լուտեր Գևորգի Ջերեջյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 646քմ մակերեսով հողամասին կից 84.03քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 84.03քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ։

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունի տարածքային ստորաբաժանման կողմից։

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

4. Արարատյան փողոցի 2-րդ նրբանցքի հ.4 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ <<Արարատյան փողոցի 2-րդ նրբանցքի հ.4 տուն>>։

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունի տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Արտաշ Ավետի Արզումանյանի, Հռիփսիմե Հովհաննեսի Մարտիրոսյանի, Արտաշես Ռաֆիկի Արզումանյանի, Էլեոնորա Ռաֆիկի Արզումանյանի, Լուտեր Գևորգի Ջերեջյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Շենգավիթ թաղապետարան:

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ